

## ՆՇԱՆԱՎՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ ՀԱԳ-ՈՒՄ



Հայաստանի ազգային գրադարանի կազմակերպած՝ «Եվրոպական ժառանգության օրեր»-ի միջոցառումների տասնօրյակի շրջանակում Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժինը հանդես եկավ արվեստի պատմության մեջ նշանակալի ներդրում ունեցած նկարիչների

մասին զեկուցումների շարքով: Բաժնի աշխատակից Լուսինե Հեշեյանը ներկայացրեց Ալբրեխտ Դյուրերի կյանքն ու ստեղծագործությունները: Բաժնի ընթերցասրահում ցուցադրվեցին Դյուրերի ավելի քան երկու տասնյակ օտարալեզու պատկերագրքերը, ալբոմները, մենագրությունները, նկարչի գրաֆիկական աշխատանքների մեծածավալ (A2 ձևաչափի) վերատպությունների 2 խոշոր հավաքածու:

Բաժնի գրքային և ոչ գրքային հրատարակությունների ենթաբաժնի վարիչ Հասմիկ Առաքելյանը խոսեց իմպրեսիոնիզմի նշանավոր դեմքերից մեկի՝ Ալֆրեդ Միսլեյի մասին: Ներկայացվեց Միսլեյին նվիրված գրականության և ալբոմային հրատարակությունների, պատկերագրքերի ցուցադրություն:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի վարիչ Աննա Օսանյանի զեկուցման հերոսը Վերածննդի իսպանացի նշանավոր նկարիչ Էլ Գրեկոն էր: Ցուցադրված էին Գրեկոյի՝ բաժնում պահվող ալբոմները, պատկերագրքերը և այլն:

Բաժնի աշխատակից Գևորգ Գալստյանը ներկայացրեց իտալացի էքսպրեսիոնիստ Ամեդեո Մոդիլյանի կյանքն ու ստեղծագործությունները: Զեկուցումն ուղեկցվեց Մոդիլյանիին վերաբերող գրականության և նրա ալբոմների ցուցադրությամբ:



Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի ընթերցասրահն այժմ սպասարկում է բաց դարակային համակարգով: Բաժնի հարուստ գրականությունն ընթերցողի տրամադրության տակ է ամեն օր. երկուշաբթիից-ուրբաթ՝ 9:00-21:00, շաբաթ՝ 9:00 - 20:00, կիրակի՝ 9:00 - 17:00













